962 Սեր է Քո անունը,

1. Սեր է Քո անունը,
Միակ հույս, ի՜մ Հիսուս,
Առանց Քեզ չի բացվի
Աշխարհին արշալույս:
Քո Հոր փառքը թողած՝
Եկար մարդացար,
Մեզ համար բացեցիր
Ճանապարհ դեպ երկինք:

Քեզ եմ փափագում, Տե՛ր,
Քեզ եմ աղոթում,
Ունայն է ամեն բան,
Դու ես ճշմարիտ ճամփան,
Դու ես ճշմարիտ ճամփան,
Օգնիր՝ չշեղվեմ,
Խոսքերիդ հետևեմ,
Խորթ է ինձ այս աշխարհ,
Ապրում եմ Քեզ համար:

2. Գիտեմ՝ վշտացրել եմ,
Մեղքերով Քեզ խոցել եմ,
Դու սիրող Հոր նման
Ներել ես ինձ ամեն բան:
Տուր ինձ՝ խոսքովդ ապրեմ,
Քո փառքը դավանեմ,
Ու թե որ հալածվեմ՝
Սուրբ Հոգով կրծքիդ փարվեմ: